ԿԱՐԾԻՔ

Մարտին Անդրանիկի Մանուկյանի <<Պառլամենտի և պառլամենտարիզմի կատարելագործման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական բարեփոխումների համատեքստում>>թեմայով ատենախոսական աշխատանքի վերաբերյալ ներկայացված ԺԲ.00.02- Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Քննարկվող թեմայի արդիականությունը պայմանավորված է մեզանում իրականացվող պետական կառավարման կատարելագործման, պառլամենտական կառավարման ձևի զարգացման հետ կապված հիմնախնդիրներով:

Ատենախոսական աշխատանքն ունի կուռ տրամաբանական կառուցվածք, որը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, որոնք ներառում են տասը ենթագլուխներ, եզրակացություններից, 212 անուն գրականության ցանկից: Աշխատանքի ընդհանուր ծավալը 186 էջ է:

Աշխատանքում ներկայացված գիտական նորույթը, ըստ որի՝ չնայած իշխանությունների բաժանման և հավասարակշռման խորհրդարանական մոդելի պարագայում պետական իշխանության մյուս մարմինների նկատմամբ Ազգային Ժողովը ձեռք է բերում այսպես կոչված՝ <<գործառութային գերակայություն>>, սակայն, այդ հատկանիշն ինքնին չպետք է դիտարկել որպես պետական իշխանության օրենսդիր, գործադիր ու դատական ճյուղերի միջև սահմանադրական հավասարակշության խախտում, սահմանադրական իրավունքի գիտության մեջ կարևոր ներդրում է:

Արժանին պետք է մատուցել ատենախոսության հեղինակին, որը նույնքան հաջողությամբ հիմնավորել է նաև, որ պետական իշխանության մարմինների միջև գործող զսպող, հավասարակշռող և փոխլրացնող համակարգերը կրում են ոչ միայն միջճյուղային, այլ նաև ներճյուղային բնույթ: Այն է՝ միմյանց զսպում,

հավասարակշռում և փոխլրացնում են ոչ միայն պետական իշխանության ճյուղերը, այլև պետական իշխանության ճյուղերի ներսում գտնվող մարմինները, այսինքն՝ պետական իշխանության ճյուղերի ներսում ևս առկա են ներճյուղային զսպող, հավասարակշռող և փոխլրացնող կառուցակարգեր:

Մեր գնահատմամբ, գիտական նորույթը պայմանավորված է նաև ոչ միայն պաշտպանության ներկայացված դրույթներով, այլև արված մի շարք հիմնարար առաջարկություններով, որոնց մեծամասնությունն արժանի է առանձին ուշադրության: Մասնավորապես՝

Անդրադառնալով Ազգային Ժողովի և գործադիր ու դատական իշխանությունների փոխհարաբերությունների առանցքային հարցին, իսկ ավելի կոնկրետ՝ գործադիր իշխանության նկատմամբ խորհրդարանական վերահսկողությանը, և վկայակոչելով միջազգային փորձը, ատենախոսության հեղինակն այն եզրակացությանն է հանգել, որ խորհրդարանական մոդելի պարագայում պետական իշխանության ճյուղերի կողմից իրականացվող գործառույթներն իրականում հավասարազոր բնույթ չունեն և միմյանցից տարբերվում են իրավաբանական ուժով ու բովանդակությամբ, այն է՝ օրենսդիր իշխանության գործունեությունն ունի օրենսդրական բնույթ, իսկ դատական և գործադիր իշխանություններինը՝ ենթաօրենսդրական: Ատենախոսության հեղինակը հիմնավորել է նաև, որ օրենսդիր իշխանությունը իշխանության մյուս ճյուղերի նկատմամբ ունի այսպես կոչված՝ <<գործառութային գերակայություն>>, ինչն ինքնին չպետք է դիտարկել որպես պետական իշխանության օրենսդիր, գործադիր և դատական իշխանության ճյուղերի միջև սահմանադրական հավասարակշռության խախտում: Քանզի իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի էությունը ոչ թե իշխանության ճյուղերին հավասարազոր գործառույթներ վերապահելն է, որոնք, իշխանության ճյուղերի գործառույթների բնույթով պայմանավորված՝ արդեն իսկ հավասարազոր չեն, այլ՝ պետական իշխանության յուրաքանչյուր ճյուղին անհրաժեշտ և բավարար լիազորությունների տրամադրման միջոցով վերջիններիս գործառութային անկախության ապահովումն է: Անդրադառնալով հարցին, որ օրենսդիր և գործադիր իշխանության ճյուղերի

փոխհարաբերություններում կենտրոնական հարցերից մեկը գործադիր իշխանության նկատմամբ խորհրդարանական վերահսկողությունն է և կարևորելով, որ նման պայմաններում առանցքային կարևորություն է ձեռք բերում գործադիր իշխանության (վարչապետի) գերիշխանության զսպման համար գործուն մեխանիզմների նախատեսումը, ատենախոսության հեղինակը օրենսդիր իշխանության կողմից գործադիր իշխանության նկատմամբ արդյունավետ վերահսկողության իրականացման քաղաքական երաշխիք դիտարկում է ուժեղ խորհրդարանական ընդդիմության առկայությունը, քանզի ընդդիմության կայացման գլխավոր չափանիշ է դառնում ոչ թե իշխանությամբ՝ իրավունքի, այլ իրավունքով իշխանության սահմանափակումը: Ավելին՝ միջազգային փորձի համակողմանի ուսումնասիրության հիման վրա՝ գտնելով, որ «Հասարակությունն իրավունք ունի հաշիվ պահանջելու իր վարչակազմի ցանկացած պետական ծառայողից» ու, կարևորելով պետական բոլոր պաշտոնյաների հաշվետվությունը և պատասխանատվությունը հասարակության առջև, ատենախոսության հեղինակը առաջ է քաշել այն դրույթը, որ վերահսկողությունը պառլամենտական հակակշիռների ու զսպումների ապահովման ամենաժողովրդավարական ձևն է: «Այնտեղ, որտեղ պառլամենտի դերը վճռորոշ է կառավարության ձևավորման գործում, բարձրագույն ներկայացուցչական հաստատության վերահսկողության գործառույթը գործադիր իշխանության նկատմամբ պառլամենտական ընդդիմության գործունեության ավանդական դաշտն է>>, եզրակացրել է ատենախոսության հեղինակը, նշելով, որ՝ Բրիտանական պառլամենտի օրինակով մեզանում ևս՝ ընդդիմություն - մեծամասնություն հարաբերությունը պետք է բնորոշվի նրանով, որ մեծամասնությունը «կառավարում է», իսկ ընդդիմությունը՝ «վերահսկում», նկատի ունենալով, որ հետագայում հնարավոր է դերերի փոփոխություն»:

Ատենախոսության հեղինակն հիմնավորել է, որ ցանկացած երկրի, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության հիմնական ուղղություններից է, այսպես կոչված, պառլամենտական (խորհրդարանական) դիվանագիտությունը, որն իր առջև դրված նպատակների որակական նշանակությամբ ոչ միայն չի փոխարինում գործադիր իշխանությանը, այլև որոշակի իմաստով լրացնում և հարստացնում է այն:Ապավինելով դիվանագիտության ուժին և աշխարհում տեղի

ունեցող բռնությունները նկատի ունենալով՝ հեղինակը նկատել է.<< Որպեսզի նվաճողները մեծ արյուն չհեղեն,դիվանագետները պետք է հեղեն մեծ թանաք>>:

Միաժամանակ, ելնելով այն իրողությունից, որ պառլամենտական դիվանագիտության բնորոշման հարցում գիտական հանրության շրջանակներում միասնական մոտեցումը բացակայում է, իսկ մյուս կողմից շատ զգայուն հարցեր են հաջողությամբ լուծվել պառլամենտական դիվանագիտության հիմքը հանդիսացող երկխոսության և բանակցությունների միջոցով, ի մի բերելով համաշխարհային փորձը՝ ատենախոսության հեղինակը մշակել է սեփական մոտեցում դիվանագիտության այդ տեսակի և ժողովրդական դիվանագիտության տարբերությունների մասին: Ավելին՝ նկատի ունենալով, որ գոյություն չունի <<պառլամենտական դիվանագիտություն>> հասկացության ընդհանուր գիտական սահմանում, ատենախոսության հեղինակը տվել է նաև դրա գիտական բնորոշումը՝ առաջարկելով պառլամենտական դիվանագիտությունը բնորոշել որպես՝ *խորհրդարանականների կողմից իրականացվող գործողությունների ամբողջություն, որն ուղղված է արտաքին քաղաքական որոշակի նպատակների հասնելու գործընթացում քաղաքական երկխոսությունն առաջ տանելուն և զարգացնելուն: Ընդ որում, երկխոսությունն այս դեպքում կիրառվում է ոչ այնքան պարտադիր վերջնարդյունքի հասնելու, որքան պառլամենտական դիվանագիտության ճկուն միջոցների գործադրմամբ քաղաքական գործընթացի մասնակիցների միջև փոխըմբռնման խորացման, դիրքորոշումների մերձեցման և վստահության մթնոլորտի ձևավորման, ասել է թե՝ բանակցությունների բարենպաստ քաղաքական մթնոլորտի ստեղծման համար:*

Անդրադառնալով պառլամենտարիզմի կայացման գործում քաղաքական կուսակցությունների դերին և առանձնահատկություններին՝ ատենախոսության հեղինակը մանրամասնել է, որ՝ մեզանում իրենց գործառույթները քաղաքական կուսակցությունների զգալի մասը դեռևս կատարում է խիստ անբավարար: Ավելին, ատենախոսության հեղինակի կարծիքով, Հայաստանի կուսակցական համակարգը դեռևս չի համապատասխանում խորհրդարանական կառավարման ձևի օբյեկտիվ չափորոշիչ- պայմաններին՝ քաղաքական համակարգի ավանդական անձնակենտրոնության հաղթահարված չլինելու հետևանքով: Դա, ըստ հեղինակի, բացատրվում

է մի շարք պատճառներով և, առաջին հերթին, այն հանգամանքով, որ հայաստանյան կուսակցությունների զգալի մասի քաղաքական իմիջը շարունակում է «որոշվել» դրանց առաջնորդների դիրքով և ոչ թե կուսակցության ծրագրերով: Հեղինակը պնդել է, որ հայաստանյան «բազմակուսակցության համակարգը» այն տեսքով, ինչ տեսքով գոյություն ունի ներկայումս, ընդունակ չէ դրականորեն ազդել իշխանության վրա և քիչ բանով է նպաստում պառլամենտի և պառլամենտարիզմի կայացմանն ու զարգացմանը: Ինչ վերաբերում է կուսակցությունների ներկայիս առատությանը Հայաստանում, ապա դարձյալ հեղինակի պնդմամբ՝ ապագայում հազիվ թե դրանք պահպանվեն, իսկ դիֆերենցման գործընթացը անխուսափելիորեն կփոխարինվի ինտեգրումով:

Անդրադարձ կատարելով կուսակցությունների գործունեության կասեցման ու արգելման հարցերին,ատենախոսության հեղինակը նկատել է, որ դրանք հայ իրականության մեջ խորությամբ ուսումնասիրված չեն ո՛չ պրակտիկ, ո՛չ էլ տեսական առումով: Հեղինակի պնդմամբ՝ առանց Սահմանադրական դատարանի որոշման հնարավոր չէ իրավաբանորեն հղում անել կուսակցության հակասահմանադրականությանը և դրանից այդ կուսակցության համար բացասական հետևանքներ արտածել: Արձանագրելով, որ ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածում «կուսակցություն»-ը գործածվում է առանց այն սահմանելու, ատենախոսության հեղինակը պնդում է, որ քաղաքական կուսակցության հասկացության սահմանումը չպետք է թողնել օրենսդրին, այն պետք է սահմանվի հենց սահմանադրական մակարդակում, քանզի նախ՝ օրենսդրի իրավասության դեպքում այն կարող է հանգեցնել կուսակցության հասկացության նեղացման, և երկրորդ՝ միայն քաղաքական կուսակցություններին է վերապահված ժողովրդի քաղաքական կամքի ձևավորմանն ու արտահայտմանը նպաստելու իրավունքը: Ըստ ատենախոսության հեղինակի՝ օրենսդիրն ինքը պետք է կաշկանդված լինի կուսակցության՝ Սահմանադրությունից բխող հասկացությամբ: Ատենախոսության հեղինակը հիմնավորել է նաև, որ բացի կուսակցության գործունեության հակասահմանադրականությունից, չի կարող գոյություն ունենալ նրա գործունեությունը թեկուզև ժամանակավորապես արգելելու որևէ այլ հիմք:

Առաջ քաշելով դրույթը, որ անհրաժեշտ է վերացնել կոալիցիաներ կազմելու՝ կուսակցությունների թվի սահմանափակումը, ինչպես նաև միջազգային փորձը հաշվի

առնելով՝ ատենախոսության հեղինակն առաջարկել է էապես ավելացնել կոալիցիա կազմելու համար նախատեսված ժամանակահատվածի տևողությունը: Բացի այդ՝ խորհրդարանում քաղաքական ուժերի ներկայացվածությունը խրախուսելու համար ատենախոսության հեղինակն առաջարկել է 1-ական տոկոսով նվազեցնել ընտրական արգելապատնեշները՝ համապատասխանաբար սահմանելով 4 և 6 տոկոս կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների համար, պահպանելով երրորդ առավելագույն թվով ձայներ ստացած կուսակցության կամ դաշինքին մանդատների բաշխման մասնակցելու դրույթն այն դեպքում, երբ արգելապատնեշը հաղթահարել են միայն երկու քաղաքական ուժ: Հեղինակն առաջարկել է նվազեցնել խորհրդարանական ընտրությունների համար նախատեսված ընտրական գրավի չափը ևս՝ մինչև 7,5 մլն դրամ: Ատենախոսության հեղինակն առաջարկել է նաև ԱԺ ընտրակարգով նախատեսել փոփոխություններ՝ սահմանելով որ յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը չպետք է գերազանցի 70 տոկոսը: Նույն ենթագլխում հեղինակն առաջարկվել է փոփոխել նաև խորհրդարանում ազգային փոքրամասնությունների ընտրվելու կարգը, սահմանելով պարզ քվոտա, այն է՝ նախատեսելով մեկական ազգային փոքրամասնության ներկայացուցչի ներառում:

Քննարկվող աշխատանքում պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները և եզրակացությունները ներկայացված են համապատասխանաբար՝ 14-ական կետերով, որոնք հիմնավորված են և ունեն տեսական և գործնական կարևոր նշանակություն: Դրանք, մեր կարծիքով, որոշակիորեն կզարգացնեն սահմանադրական իրավունքի տեսությունը, իսկ ստացված արդյունքները կարող են օգտագործվել հետագա հետազոտողների կողմից՝ իրենց գիտական ուսումնասիրությունների գործընթացում:

Բացի այդ, աշխատանքում ձևավորված հիմնական դրույթները կարող են օգտագործվել իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայում, ինչպես նաև բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ սահմանադրական իրավունքի դասընթացի դասավանդման ընթացքում:

Ատենախոսական թեման քննարկվել է ՀՀԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի գիտական խորհրդում, որտեղ հաստատվել են ատենախոսության մեջ առկա հիմնական տեսական վերլուծություններն ու

եզրակացությունները և աշխատանքը երաշխավորվել է հրապարակային պաշտպանության: Ատենախոսության մեջ կատարված վերլուծությունների արդյունքները արտացոլվել են հեղինակի կողմից հրապարակված 4 մենագրություններում և 14 գիտական հոդվածներում որոնք լույս են տեսել հայրենական և օտարերկրյա գրախոսվող գիտական ամսագրերում:

Ամբողջությամբ դրական գնահատելով կատարված աշխատանքը, այդուհանդերձ, ունեմ հետևյալ դիտողությունները.

1. Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթների 12-րդ կետն ունի հետևյալ շարադրանքը. <<Կարևորելով խորհրդարանական ընդդիմության պաշտպանության խնդիրը, արձանագրելով, որ միջազգային մակարդակով գոյություն ունեն սակավաթիվ ստանդարտներ, որոնք միտված են խորհրդարանական ընդդիմության պաշտպանությանը, ըստ մեզ՝ պետք է մշակել առավել արդյունավետ միջոցներ, որոնք պետք է ամրապնդեն խորհրդարանական ընդդիմության դերակատարությունը՝ նրան վերապահելով համապատասխան գործիքակազմ և միջոցներ>>:

Մեր կարծիքով, ճիշտ կլիներ, որպեսզի աշխատանքում ներկայացված լինեին խորհրդարանական ընդդիմության դերակատարությունն ապահովող և նրա պաշտպանությանը միտված այդ ստանդարտներից առնվազն մի քանիսը:

2. Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթների 12-րդ կետով ատենախոսության հեղինակը նորովի է բնորոշել (սահմանել) պառլամենտարիզմի հասկացությունը:

Պառլամենտարիզմի սահմանման վերաբերյալ ատենախոսությունում թեև բերված են օտարերկրյա մի շարք հեղինակների գիտական բնորոշումները ևս, այդուհանդերձ, ցանկալի կլիներ, որպեսզի ներկայացված լինեին դրանց նմանություններն ու էական տարբերությունները նույնպես:

Նշված դիտողություններն ունեն մասնակի բնույթ և բոլորովին չեն նսեմացնում աշխատանքի գիտական և տեսական նշանակությունը:

Ատենախոսությունը բավարարում ՀՀ ԲՈԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի պահանջներին: Այն համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանաշնորհման անվանացանկի <<Հանրային իրավունք- սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում>> մասնագիտությանը (թվանիշ՝ԺԲ.00.02): Սեղմագիրը, հրատարակված մենագրություններն ու գիտական հոդվածները ընդգրկում են ատենախոսության հիմնական բովանդակությունը:

Ելնելով վերոշարադրյալից, գտնում ենք, որ աշխատանքը լիովին համապատասխանում է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությանը ներկայացվող ՀՀ ԲՈԿ-ի <<Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի>> պահանջներին: Նշված թեկնածուական ատենախոսությունը գիտական նորույթ պարունակող, գիտականորեն հիմնավորված, ամբողջական ու ավարտուն հետազոտություն է, իսկ հեղինակը՝ Մարտին Անդրանիկի Մանուկյանը, արժանի է <<Հանրային իրավունք- սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք,պետական կառավարում>> (դասիչ՝ ԺԲ.00.02) մասնագիտությամբ՝ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս, իրավաբանական
գիտությունների թեկնածու Հ. Զ.Սարգսյան.

Հովհաննես Զավենի Սարգսյանի ստորագրությունը
հաստատում եմ՝
Երևանի <<Մաշտոց>> համալսարանի պրոռեկտոր Գ. Սարգսյան